# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<08>> դեկտեմբերի 2014թ. N 233

ք. Արմավիր

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 210 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով <<Էջմիածնի Բուսա>> բաց բաժնետիրական ընկերության տնօրենի 2014թվականի նոյեմբերի 26-ի N 04 գրությունը.

*որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի հունիսի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների սպասարկումը մրցույթի արդյունքներով կազմակերպությանը հատկացնելու մասին>> N 210 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշման 3-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:
2. <<Արմավիր-Ամասիա>> միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը, մինչև նոր մրցույթի կայացումը ժամանակավորապես վերապահել <<Էջմիածնի Բուսա>> բաց բաժնետիրական ընկերությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*